Երբ վերադառնում եմ տուն, Սաթօն մը-տահոգ հարցնում է.

— Վարագոյրը բերի՞ը...

* * *

Յունուար.—

Գիմնազիայում աշակերտները ապստամբել են ինձ դէմ:

Լաւ չեմ հասկանում՝ հարցը ինչո՞ւմն է: Ժողովներ, որոշումներ: Կոմբինիզը հուլ է տալիս:

Տալիս եմ հրաժարականս:

* * *

— ...

Թուրք տանտիկինը դուռը բացել է եւ երկարօրէն նայում է ինձ: Մօտենում է եւ խորհրդաւոր ձայնով.—

— Ձեզ մի բան ասե՞մ... Գնացէք այստեղից, այս երկիրը ձեզ համար չէ: Գնացէք այստեղից:

Ասում է, ամէն դիշեր, իմ մասին վատ երազներ է տեսնում: Ես կարծում եմ, որ ռուս չեկիստը մի բան է ասել միւս Թուրք կնոջ, նա սրան, սա էլ ինձ:

Նախազգուշացնում են:

* * *

— ...

Այսօր իմ բացակայութեան ժամանակ, դիմացի միլիցիապետը մարդ է ղրկել, ասելու համար, որ ուզում է՝ դայ, դաշնամուրի վրայ մի քիչ նուագի:

Կինս բնականաբար հրաժարուել է, բայց տեսնելով, որ հրամայում են, դուրս է գնացել:

Միլիցիապետը եկել նստել է դաշնամուրի առջեւ, մի մատով նուագել եւ մեկնել:

Ուզում են նաեւ ինձ անարգել:

* * *

— ...

Չեկայից Թուղթ է եկել՝ ներկայանալ:

Զգուշացնում եմ բարեկամներիս, եթէ բանտարկեն...

Ներկայանում եմ:

Չեկայի այդ չէնքի մասին այնքան պատմութիւններ եմ լսել: Ցաւի եւ ողբերգութիւնների զաղրելի այդ տունը: Գնդակահարումներ, չարչարանք, նախատինք:

Դրան առջեւ Թուղթս ցոյց եմ տալիս ռուս զինուորներին: Ինձ մի տոմսակ են տալիս ու ուղղում դէպի վեր: Սանդուխը բարձրանալու ժամանակ նայում եմ դէպի բակը՝ կողպուած դռներ, երկաթներով ծածկուած պատուհաններ... Ամէն ինչ հինցած, խարխուլ եւ թշուառ:

Ոճիր եւ աղքատութիւն: Արիւն եւ ոջիլ:

Մտնում եմ մի սենեակ: Սեղան, թղթեր, մի օրիորդ: Զննում է Թուղթս եւ առանց երեսիս նայելու. սպասեցէ՛ք:

Շատ անգամ այդ օրիորդին տեսել եմ փողոցում, թատրոնում եւ մինչեւ անգամ համալսարանում: Երբեք չէի կարող երեւակայել, որ նա աշխատում է այստեղ: Դէմքն էլ բոլորովին ուրիշ արտայայտութիւն է ստացել. դա ի՞նչ աչքեր են:

Երկար սպասումից յետոյ կանչում են ներս: Սեղանի ետեւ նստել է չէկ մի երիտասարդ, ծխամորճը բերանին, խիստ եւ հանդիսաւոր ձեւերով: Դանդաղօրէն վառում է իր ծխամորճը եւ յօնքերի տակից ինձ դիտում:

Ցետոյ ակռաների տակից, ռուսերէն ամէն մի բառը շեշտելով՝ ասում.

— Ձեր մասին անդադար դանդատներ են գալիս: Խորհրդային իշխանութեան մասին անընդատ կարծիքներ էք յայտնում, ինչպէս Սեւանայ ճամբորդութեան ժամանակ, քննադատում էք, միլիցիականներին արգելում էք իրենց պաշտօնը կատարել, պաշտպանում էք վանեցի վաչխառուներին, անպատուում էք միլիցիապետին... Ձեր հակայեղափոխական գործունէութիւնը մեզ քաջ յայտնի է, մենք ամէն բան դիտենք, ամէն բան...

Պարլամենտի դրօշակի մասին ոչ մի խօսք. չունչ եմ քաշում:

Բացատրում եմ: «Մարտակոչ»ի յօդուածը, բանուորա-դիւղացիական, աշխատաւոր մասսաների լեզուն...

Մի ժամ դլխիս ճառ է կարդում:

— Ձեր գործը կը գնայ առայժմ Ժողովրդական Դատարան... Զգուշացէ՛ք:

Ու Թուղթս ստորագրում է, որպէսզի կարողանամ դուրս գնալ:

* * *

— ...

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան